312(47)

30 JAN 2018

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՂՄԻՑ
1938 թ. հուլիսի 26-ին

ՀՐԱՀԱՆԳ

ԽՍՀՄ ՊԵՏՊԼԱՆԻՆ ԿԻՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 1939 թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹՐ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաշվարարները մարդահամարի թերթերն սկսում են լրացնել 1939 թվի հունվարի 17-ի առավոտյան ժամը 8-ից և լրացնելը շարունակում են քաղաքներում 7 որ՝ մինչև հունվարի 23-ը, իսկ գյուղական վայրերում 10 որ՝ մինչև հունվարի 26-ը ներառյալ։

2. Բնակչությունը ցուցակագրվում է ըստ բնակության վայրի, թեկուզ այդ բնակավայրում ապրելիս լինի ժամանակավորապես, և վոչ թե ըստ աշխատանքի կամ ծառայության վայրի։

3. Հաշվարարները մարդահամարի թերթերը լրացնում են բոլոր շենքերը շրջելով, վորտեղ բնակչություն է ապրում, կամ կարող է ապրել, չբացառելով այն շենքերը, վորոնք զբաղեցված են ձեռնարկությունների, կազմակերպությունների և հիմնարկությունների կողմից։

4. Յուրաքանչյուր շենքում մարդահամարի թերթերի մեջ գրանցվում է ամբողջ առկա բնակչությունը ՀՈՒՆՎԱՐԻ 16-ի լույս 17-ի գիշերվա ժամը 12-ի դրությամբ, ներառյալ նաև ժամանակավոր բնակվողներին։ Բացի այդ գրանցվում են նաև ժամանակավոր բացակայողները։

5. Առկա բնակչություն են համարվում այն բոլոր անձինք, վորոնք հունվարի 16-ի լույս 17-ի գիշերն անց են

կացրել տվյալ շենքում և այդ շենքում բոլոր ապրողները, որոնք այդ գիշերը գտնվելիս են եղել նույն այդ քաղաքային, ավանային, կամ գյուղական խորհրդի տերիտորիայի վրա, ինչպես նաև աշխատանքում, թեկուզ և տվյալ խորհրդի սահմաններից դուրս, կամ որոնք մեկնել են այնպիսի վայրեր, որտեղ նրանք չեն կարող ցուցակագրվել։

Դրան համապատասխան առկա բնակչություն պետք է համարվեն, բացի հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը տվյալ շենքում անցկացրածներից մասնավորապես հետևյալները՝

ա) Գիշերային հերթափոխերում աշխատողները, պուտերում, կամ որսորդության մեջ և կամ գիշերը կատարվող այլ աշխատանքներում գտնվողները։

բ) Իրենց պաշտոնական պարտականությունների կատարման մեջ գտնվող յերկաթուղայինները (մեքենավարները, հնոցապանները, կոնդուկտորները, ուղեկցողները և ուրիշները), ջրային տրանսպորտի աշխատողները, ոդաչուները, վագոն-ռեստորանների անձնակազմը։

գ) Ճանապարհին գտնվողները՝ ավտոմոբիլներում սայլերում, հեծյալ, հետիոտն գնացողները և այլն, տրանսպորտի բոլոր տեսակներում բեռներին և փոստին ուղեկցող, անասունի հոտերին ուղեկցող անձինք։

դ) Կարճատև բացակայության մեջ՝ կոլտնտեսական ֆերմաներում, դաշտային կայաններում և յայլաներում (տաբորներում) գտնվողները, դաշտում կալսողները և այլն։

ե) Թատրոնում, ակումբում, ռեստորանում յեղողները, մեկնողներին ճանապարհ գցողները և այլն։

զ) Միության հանգստի տներում հանգստացողները և մանկապարտեզներում ու հնգօրյա մանկամսուրներում գտնվող յերեխաները։

յե) Հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը տեղական և մերձ քաղաքային գնացքներով, ավտոբուսներով, տեղական հաղորդակցության շոգենավերով մեկնողները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ
1-36089թ

ը) Այն բացակայողները, որոնք գնացել են շուկա, տոնավաճառ, սայլորդության, ալրաղաց, անտառ փայտ բերելու, որսի, ձկնորսության, խոտ բերելու և այլն։

ժ) Բոլոր նրանք, որոնք տանը չեն, բայց նույն այդ քաղաքային, ավանային կամ գյուղական խորհրդի տերիտորիայի վրա յեն գտնվում (հյուր են գնացել հարազատների, կամ ծանոթների մոտ և այլն)։

Վերևում թված բոլոր անձինք մտցվում են մարդահամարի թերթերի մեջ առանց նշում անելու ժամանակավոր բացակայության մասին։

6. Ժամանակավոր բացակայողների շարքն են դասվում բոլոր այն անձինք, սույն հրահանգի 5-րդ կետում հիշատակվածների բացառությամբ, որոնք սովորաբար ապրում են այստեղ, բայց թե հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը գտնվել են տվյալ քաղաքային, ավանային կամ գյուղական խորհրդի սահմաններից դուրս, յեթե նրանց բացակայությունը վեց ամսից ավելի չէ։ Որինակ՝ ժամանակավոր, կամ սեզոնային աշխատանքի, գործուղման, հարազատների և ծանոթների մոտ գնացածները։

Այդ բոլոր անձինք, ըստ իրենց մշտական բնակության վայրի, գրանցվում են մարդահամարի թերթերի մեջ՝ ժամանակավոր բացակայության մասին նշում անելով։

Ըստ գտնվելու վայրի հունվարի 16-ի լույս 17-ի գիշերն այդ անձինք ցուցակագրվում են, որպես առկա բնակչություն, նշում անելով ժամանակավոր բնակության մասին։

Հիվանդանոցներում և սանատորիաներում բժշկվող հիվանդները, հանգստի տներում հանգստացողները, ծնողական տներում գտնվողները ցուցակագրվում են այդ տեղերում՝ ժամանակավոր բնակության մասին նշում անելով, իսկ իրենց մշտական բնակության վայրերում ցուցակագրվում են ժամանակավոր բացակայության մասին նշում անելով, թեկուզ նրանց մշտական բնակավայրը լինի միևնույն այն քաղաքային, ավանային կամ գյու-

զական խորհրդի տերիտորիայի վրա, վորտեղ գտնվում է հիվանդանոցը, սանատորիան և այլն։

7. Այն անձինք, վորոնք փոխադրվել են այլ վայրեր մշտապես բնակվելու, Կարմիր Բանակի և Ռազմածովային Նավատորմի շարքերում գտնվողները, ռազմական վայրերում բնակվող սովորողները, այլ և այն բոլոր անձինք, վորոնք մեկնել են ավյալ տեղից մարդահամարի որից ավելի քան վեց ամիս առաջ, մարդահամարի թերթերի մեջ ըստ իրենց նախկին բնակավայրի բոլորովին չեն մտցվում։

Կալանավայրերում գտնվող անձինք ցուցակագրվում են ըստ իրենց գտնվելու վայրի։

8. Բոլոր անձանց մասին տեղեկություններ պետք է ստացվեն անձնական հարցման միջոցով, բացառությամբ յերեխաների, ծանր հիվանդների և ժամանակավոր բացակայողների։

Յեթե ցուցակագրվողներից վորևե մեկը առաջին այցի ժամանակ բացակա յե, ապա հաշվարարը պարտավոր է մարդահամարի թերթի մեջ գրանցել բացակայողի ազգանունը, անունը և հայրանունը, վորպեսզի նրան անձամբ հարցում անի հետագա այցերի ժամանակ։

Միայն այն դեպքում, յերբ անհնարին է լինում մինչև մարդահամարի վերջին որը անձամբ հարցման յենթարկել վորևե մեկին, հաշվարարը մարդահամարի թերթերի մեջ և մտցնում նրա մասին ստացված տեղեկությունները՝ հիմնվելով ընտանիքի անդամների, հարևանների, տնային վարչության, գյուղխորհրդի, կոլտնտեսության վարչության անդամների և ուրիշների խոսքերի վրա։

Ծանր հիվանդների և ժամանակավոր բացակայողների մասին տեղեկություններ են ստացվում ընտանիքի անդամներից, իսկ միայնակների և ամբողջ կազմով բացակայող ընտանիքների մասին՝ հարևաններից, տնային վարչությունից, գյուղխորհրդի, կոլտնտեսության վարչության անդամներից և այլն։

Յերեխաների մասին տեղեկությունները գրանցվում

են հիմնվելով ծնողների, կամ դաստիարակների ցուցմունքների վրա։

9. Մարդահամարի առանձին թերթը կազմվում է՝

ա) Յուրաքանչյուր առանձին բնակարանի համար։

բ) Յուրաքանչյուր առանձին տան համար (յեթե դա բաղկացած է մեկ բնակարանից), հյուղի, խրճիթի, ամառանոցի, յուրտի և այլնի համար։

գ) Յուրաքանչյուր առանձին սենյակի համար՝ հանրակացարաններում։

Փակ հիմնարկություններում՝ հիվանդանոցներում, սանատորիաներում, մանկատներում, հաշմանդամների տներում՝ մարդահամարի թերթը կազմվում է յուրաքանչյուր բաժանմունքի կամ կորպուսի համար, նայած թե համապատասխան հիմնարկությունների մասյաններում ինչպես են տարվում գրանցումները։

Յեթե առանձին կացարանի մեջ ապրողների թիվը 8 հոգուց ավելի յե, ապա կազմվում է մարդահամարի յերկու կամ ավելի թերթ։

10. Հարցումն ու թերթերի մեջ գրանցումը կատարվում է ըստ ընտանիքի, այսինքն մարդահամարի թերթի մեջ գրանցվում են անուն-անուն նախ մեկ ընտանիքի բոլոր անդամները, ապա մյուս ընտանիքի բոլոր անդամները և այլն։

11. Ավյալ շենքում վորպես ժամանակավոր բնակվող բոլոր ցուցակագրվածներին հաշվարարը տալիս է տեղեկանք՝ մարդահամարի յենթարկված լինելու մասին։

Հաշվարարը համարակալում է իր տված տեղեկանքներն իր տեղամասի սահմաններում։

Տեղեկանքներ են տրվում նաև հեռու մեկնող գնացքներում և շոգենավերում, յերկաթուղու վակզալներում և նման տեղերում մարդահամարի բոլոր յենթարկվածներին։

Հաշվարարը պարտավոր է նախազգուշացնել, վոր տեղեկանքն անհրաժեշտ է պահել մինչև 1939 թ. փետրվարի 15-ը։

12. Եթե տվյալ շենքում բնակվում են (թեկուզ ժամանակավոր) այնպիսի անձնավորություններ, որոնք պիտի մարդահամարի յենթարկվեն առկա բնակչության թվում մեկ այլ վայրում, ապա հաշվարարը պարտավոր է պարզել, արդյոք նրանք տեղեկանք ունեն մարդահամարի յենթարկված լինելու մասին։ Այդպիսի տեղեկանք չունեցող անձանց նկատմամբ կոնտրոլ բլանկներ են կազմվում։

Կոնտրոլ բլանկը պարունակում է մարդահամարի թերթի բոլոր հարցերը և բացի այդ, նաև այն վայրի մանրամասն հասցեն, որտեղ տվյալ անձը պիտի մարդահամարի յենթարկվեր։

Այն անձինք, որոնց նկատմամբ կազմված են կոնտրոլ բլանկներ, չեն մացվում մարդահամարի ընդհանուր թերթերում առկա բնակչության թվի մեջ ըստ կոնտրոլ բլանկը կազմելու վայրի։

Հետագայում կոնտրոլ բլանկն ստուգվում է մարդահամարի յենթարկման յենթադրվող վայրի նյութերով։

Կոնտրոլ բլանկների կազմելու կարգը լուսաբանվում է հետևյալ օրինակներով։

ԻՎԱՆՈՎ Գ. Ի.—մշտապես ապրում է Մոսկվայում, հունվարի 16-ի առավոտյան մեկնել է Տուլա քաղաքը, որտեղ անց է կացրել հունվարի լույս 17-ի գիշերը, իսկ հունվարի 18-ին վերադարձել է Մոսկվա և այստեղ հանդիպել է հաշվարարին։ Իվանովը պետք է մարդահամարի յենթարկվեր Տուլա քաղաքի առկա բնակչության թվում, որպես ժամանակավոր բնակվող, իսկ Մոսկվայում՝ որպես ժամանակավոր բացակայող։

Եթե Իվանովը ձեռքին տեղեկանք չունի մարդահամարի յենթարկված լինելու մասին, ապա Մոսկվայի հաշվարարը նրա նկատմամբ կոնտրոլ բլանկ է կազմում։ Դրա հետ միասին Իվանովը Մոսկվայում մացվում է մարդահամարի թերթի մեջ ըստ իր մշտական բնակության վայրի, որպես ժամանակավոր բացակայող։

ՍԻԴՈՐՈՎ Գ. Վ.—մշտապես ապրում է Վոլոգդա քաղաքում։ Հունվարի 18-ին մեկնել է Արխանգելսկ և հունվարի 20-ին այնտեղ հանդիպել է հաշվարարներից մեկին։ Սիդորովը պիտի մարդահամարի յենթարկվի Վոլոգդա քաղաքի առկա բնակչության թվում։ Եթե, սակայն, նա իր ձեռքին տեղեկանք չունի մարդահամարի յենթարկված լինելու մասին, ապա Արխանգելսկի հաշվարարը պարտավոր է Սիդորովի նկատմամբ կոնտրոլ բլանկ կազմել։ Արխանգելսկի մարդահամարի ընդհանուր թերթերում Սիդորովը բոլորովին չի մացվում։

13. Այն անձանց, որոնց նկատմամբ կոնտրոլ բլանկներ են կազմված նույնպես տրվում է տեղեկանք մարդահամարի յենթարկված լինելու մասին։

14. Մարդահամարի յենթարկված լինելու մասին տեղեկանքներ ունեցող անձինք, չպիտի յերկրորդ անգամ գրանցվեն մարդահամարի թերթերի մեջ առկա բնակչության թվում։

Ժամանակավոր բացակայողները մշտական բնակության վայրում մարդահամարի թերթերի մեջ են մացվում նաև այն դեպքում, յեթե նրանք նույնիսկ տեղեկանք ունեն։

ՊԵՏՐՈՎ Վ. Ն. — մշտապես ապրում է Մոսկվայում։ Հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը նա գտնվել է Լոսինոստրովսկ քաղաքում։ Այնտեղ մարդահամարի յենթարկվել առկա բնակչության թվում (որպես ժամանակավոր բնակվող) և հաշվարարից տեղեկանք և ստացել։ Հունվարի 20-ին Պետրովը վերադարձավ Մոսկվա և իր բնակարանում հանդիպեց հաշվարարին։ Պետրովը ներկայացրեց տեղեկանքը Լոսինոստրովսկ քաղաքում մարդահամարի յենթարկված լինելու մասին։ Հաշվարարը Պետրովին մացնում է մարդահամարի թերթի մեջ՝ 4-րդ հարցում նշում անելով «ժամանակավոր բացակայող»։

15. Մարդահամարը վերջանալուց հետո հրահանգիչը, հաշվարարի հետ միասին, իսկ գյուղական վայրերում նաև գյուղական խորհրդի լիազորի հետ, համաձայնած կոնտրոլ

12. Եթե տվյալ շենքում բնակվում են (թեկուզ ժամանակավոր) այնպիսի անձնավորություններ, որոնք պիտի մարդահամարի յենթարկվեն առկա բնակչության թվում մեկ այլ վայրում, ապա հաշվարարը պարտավոր է պարզել, արդյոք նրանք տեղեկանք ունեն մարդահամարի յենթարկված լինելու մասին։ Այդպիսի տեղեկանք չունեցող անձանց նկատմամբ կոնտրոլ բլանկներ են կազմվում։

Կոնտրոլ բլանկը պարունակում է մարդահամարի թերթի բոլոր հարցերը և բացի այդ, նաև այն վայրի մասնաբաժնն հասցեն, որտեղ տվյալ անձը պիտի մարդահամարի յենթարկվեր։

Այն անձինք, որոնց նկատմամբ կազմված են կոնտրոլ բլանկներ, չեն մացվում մարդահամարի ընդհանուր թերթերում առկա բնակչության թվի մեջ ըստ կոնտրոլ բլանկը կազմելու վայրի։

Հետագայում կոնտրոլ բլանկն ստուգվում է մարդահամարի յենթարկման յենթադրվող վայրի նյութերով։

Կոնտրոլ բլանկների կազմելու կարգը լուսաբանվում է հետևյալ օրինակներով։

ԻՎԱՆՈՎ, Գ. Ի.—մշտապես ապրում է Մոսկվայում, հունվարի 16-ի առավոտյան մեկնել է Տուլա քաղաքը, որտեղ անց է կացրել հունվարի լույս 17-ի գիշերը, իսկ հունվարի 18-ին վերադարձել է Մոսկվա և այստեղ հանդիպել է հաշվարարին։ Իվանովը պետք է մարդահամարի յենթարկվեր Տուլա քաղաքի առկա բնակչության թվում, որպես ժամանակավոր բնակվող, իսկ Մոսկվայում՝ որպես ժամանակավոր բացակայող։

Եթե Իվանովը ձեռքին տեղեկանք չունի մարդահամարի յենթարկված լինելու մասին, ապա Մոսկվայի հաշվարարը նրա նկատմամբ կոնտրոլ բլանկ է կազմում։ Դրա հետ միասին Իվանովը Մոսկվայում մացվում է մարդահամարի թերթի մեջ ըստ իր մշտական բնակության վայրի, որպես ժամանակավոր բացակայող։

ՍԻԴՈՐՈՎ, Գ. Վ.—մշտապես ապրում է Վոլոգդա քաղաքում։ Հունվարի 18-ին մեկնել է Արխանգելսկ և հունվարի 20-ին այնտեղ հանդիպել է հաշվարարներից մեկին։ Սիդորովը պիտի մարդահամարի յենթարկվի Վոլոգդա քաղաքի առկա բնակչության թվում։ Եթե, սակայն, նա իր ձեռքին տեղեկանք չունի մարդահամարի յենթարկված լինելու մասին, ապա Արխանգելսկի հաշվարարը պարտավոր է Սիդորովի նկատմամբ կոնտրոլ բլանկ կազմել։ Արխանգելսկի մարդահամարի ընդհանուր թերթերում Սիդորովը բոլորովին չի մացվում։

13. Այն անձանց, որոնց նկատմամբ կոնտրոլ բլանկներ են կազմված նույնպես տրվում է տեղեկանք մարդահամարի յենթարկված լինելու մասին։

14. Մարդահամարի յենթարկված լինելու մասին տեղեկանքներ ունեցող անձինք, չպիտի յերկրորդ անգամ գրանցվեն մարդահամարի թերթերի մեջ առկա բնակչության թվում։

Ժամանակավոր բացակայողները մշտական բնակության վայրում մարդահամարի թերթերի մեջ են մացվում նաև այն դեպքում, յեթե նրանք նույնիսկ տեղեկանք ունեն։

ՊԵՏՐՈՎ, Վ. Ն. — մշտապես ապրում է Մոսկվայում։ Հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը նա գտնվել է Լոսինոոստրովսկ քաղաքում։ Այնտեղ մարդահամարի յենթարկվել առկա բնակչության թվում (որպես ժամանակավոր բնակվող) և հաշվարարից տեղեկանք է ստացել։ Հունվարի 20-ին Պետրովը վերադարձավ Մոսկվա և իր բնակարանում հանդիպեց հաշվարարին։ Պետրովը ներկայացրեց տեղեկանքը Լոսինոոստրովսկ քաղաքում մարդահամարի յենթարկված լինելու մասին։ Հաշվարարը Պետրովին մացնում է մարդահամարի թերթի մեջ՝ 4-րդ հարցում նշում անելով «ժամանակավոր բացակայող»։

15. Մարդահամարը վերջանալուց հետո հրահանգիչը, հաշվարարի հետ միասին, իսկ գյուղական վայրերում նաև գյուղական խորհրդի լիազորի հետ, համատարած կոնտրոլ

շրջագայություն և կատարում, վորպեսզի ստուգի, թե արդյոք բացթողումներ և կրկնակի գրանցումներ չեն յեղել մարդահամարի ժամանակ։

Կոնտրոլ շրջագայությունը քաղաքներում կատարվում է 1939 թ. հունվարի 24-ից մինչև փետրվարի 2-ը, իսկ գյուղական վայրերում հունվարի 27-ից մինչև փետրվարի 5-ը։

Կոնտրոլ շրջագայության ժամանակ հրահանգիչը պարտավոր է ստուգել, թե արդյոք մարդահամարն անցել են բոլոր ընտանիքները և միայնակները, ներառյալ նաև հունվարի 16-ից հետո ժամանած անձինք։

Այն բոլոր անձանցից, վորոնք մարդահամարի չեն յենթարկված տվյալ շենքում առկա բնակչության թվում, պետք է իմանալ ու պարզել, թե վորտեղ եյին նրանք գրանվում հունվարի 16-ի լույս 17-ի գիշերը։

Տվյալ շենքում մարդահամարի յենթակա, բայց հաշվարարի կողմից բաց թողված անձնավորություններին հրահանգիչը մտցնում է մարդահամարի թերթերի մեջ։

Կոնտրոլ բլանկ և կազմվում այն անձանց նկատմամբ, վորոնք յենթակա եյին մարդահամարին այլ վայրում, բայց տեղեկանքներ չունեն մարդահամարի յենթարկված լինելու մասին։

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մարդահամարի թերթերը համարակալվում են քաղաքներում տնատիրության սահմաններում, իսկ գյուղական վայրերում՝ բնակավայրի սահմաններում։

Յեթե առանձին տնատիրությունը, կամ բնակավայրը բաժանվում է մի քանի հաշվային տեղամասերի, համարակալումը կատարվում է հաշվային տեղամասի սահմաններում։

Յեթե առանձին շենքում (բնակարանում, խրճիթում և այլն) ապրողների թիվը 8 հոգուց ավելի յե, ապա մարդահամարի լրացուցիչ թերթերը պետք է ըստ կարգի նույն համարն ունենան, ինչ և առաջին թերթը, վերջինիս վրա գրված համարից հետո ավելացնելով «ա» տառը, հետևյալ թերթի վրա՝ «բ» տառը և այլն։

Ըստ վորում լրացվում է ինչպես առաջին, նույնպես և լրացուցիչ թերթերի յերեսի կողմի վերնագրային մասը։

Յուրաքանչյուր անձի ազգանունը, անունը և հայրանունը գրանցվում է լրիվ, առանց վորևե կրճատման։

Յուրաքանչյուր անձի գրանցումն ունի համար, վոր գրվում է առաջին տողում ազգանունից առաջ։ Համարակալումը կատարվում է յուրաքանչյուր բնակարանի, տան կամ այլ վորևե այն շենքի սահմաններում, վորի նկատմամբ առանձին մարդահամարի թերթ է կազմվում։

ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Առնչությունն ընտանիքի գլխավորի հետ (կինը, տղան, մայրը, քույրը, յեղբոր կամ քրոջ վարդին յեվ այլն)։

Ընտանիքի գլխավորը համարվում է նա, ով հայթհայթում է ապրուստի գլխավոր միջոցները։ Յուրաքանչյուր ընտանիքում առաջինը գրանցվում է ընտանիքի գլխավորը, նրա նկատմամբ առաջին հարցի պատասխանի փոխարեն գիծ է քաշվում։ Ընտանիքի բոլոր մնացած անդամների նկատմամբ գրվում է նրանց առնչությունն ընտանիքի գլխավորի հետ։

Միայնակների նկատմամբ առաջին հարցի պատասխանում նշվում է «միայնակ»։

Յեթե հարցման յենթարկվողը վորևե մեկ այլ վայրում ընտանիք ունի, առաջին հարցի պատասխանի փոխարեն գիծ է քաշվում։

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մշտական թե՞ ժամանակավոր է բնակվում այստեղ։

Մշտական բնակվողների նկատմամբ գրանցվում է

«մշտական», ժամանակավոր ապրողների համար՝ «ժամանակավոր»։

«Ժամանակավոր» նշումն արվում է այն բոլոր անձանց նկատմամբ, վորոնք սովորաբար ապրում են այլ վայրում և ժամանակավորապես մեկնել են մշտական բնակության վայրից, վոչ ավելի քան վեց ամիս առաջ։

Տվյալ վայրը մշտական բնակության յեկած անձինք համարվում են մշտական բնակվողներ, անկախ նրանց ժամանման ժամանակից։

«Մշտական» նշումն արվում է նույնպես.

ա) Այն անձանց նկատմամբ, վորոնք իրենց նախկին մշտական բնակության վայրից դուրս են յեկել մարդահամարի որից ավելի քան վեց ամիս առաջ, անկախ գալու պատճառներից։

բ) Այն սովորողների նկատմամբ, վորոնք ապրում են ըստ ուսման վայրի։

գ) Այն անձանց նկատմամբ, վորոնք չեն կարողանում մշտական բնակության այլ վայր ցույց տալ։

ՅԵՐՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ժամանակավոր բնակվողի համար ցույց տալ՝
ա) Մշտական բնակավայրը
բ) վորեան ժամանակ և բացակայում մշտական բնակավայրից։

Այն բոլոր անձանց նկատմամբ, վորոնք յերկրորդ հարցում գրանցված են «ժամանակավոր» նշումով, ցույց և տրվում այն հանրապետությունը, յերկրամասը կամ մարզը, շրջանը և բնակավայրի անունը, վորտեղ նրանք մշտապես բնակվում են։

Բնակության մշտական վայրից բացակայելու տևողությունը գրանցելիս ցույց և տրվում ամիսների թիվը։ Մեկ ամսից պակաս տևողության դեպքում գրանցվում է «մեկ ամսից պակաս»։

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Այստեղ մշտական բնակվողի, բայց ժամանակավոր բացակայողի նկատմամբ նշել «ժամանակավոր բացակայում է» յեվ ցույց տալ վորեան ժամանակ է բացակայում։

Ժամանակավոր բացակայության մասին նշումն արվում է այն բոլոր անձանց նկատմամբ, վորոնք մատանշված են այս հրահանգի 6-րդ կետում։

Բացակայության տևողությունը նշելիս մատանշվում է ամիսների թիվը։ Մեկ ամսից պակաս տևողության դեպքում գրանցվում է «մեկ ամսից պակաս»։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սեռը (արական, իգական)։

Պատասխանը գրանցվում է «ար.» կամ «իգ.» խոսքերով։

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Քանի՞ տարին է լրացել ծննդյան որից, իսկ մեկ տարեկանից փոքր յերեխաների համար՝ ամիսը։

Մեկ տարեկանից մեծ անձանց նկատմամբ գրանցվում է միայն լրացած տարիների թիվը։ Մեկ տարեկանից փոքր յերեխաների նկատմամբ գրանցվում է միայն լրացած ամիսների թիվը։ Մեկ ամսականից փոքր յերեխաների նկատմամբ գրանցվում է «մեկ ամսականից փոքր»։

Պետք է նկատի ունենալ, վոր տարիքի մասին ցույցմունքները հաճախ կլորացրած են տրվում։ Որինակ՝ յերեսունվեցին տարեկաններն ասում են, թե իրենք քառասուն տարեկան են, յերեսունվեց տարեկանները՝ թե յերեսունհինգ տարեկան են և այլն։

Անհրաժեշտ է ծննդյան տարին պարզելով ջանալ, վոր հարցման յենթարկվողները հաղորդեն իրենց ճշգրիտ տարիքը, առանց կլորացնելու։

ՅՈԹԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ազգությունը։

Գրանցվում է այն ազգությունը, վորին ինքն իրեն պատկանող է համարում հարցման յենթարկվողը։

ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Մայրենի լեզուն։

Գրանցվում է այն լեզվի անունը, վորն ինքը հարցման յենթարկվողը համարում է իր մայրենի լեզուն։ Դեռ խոսել չկարողացող յերեխաների համար վորպես մայրենի լեզու գրանցվում է այն լեզուն, վորով սովորաբար խոսում են ընտանիքում։ Խուլ ու համրերի մայրենի լեզուն է համարվում այն լեզուն, վորով խոսում է նրանց ընտանիքը, կամ եվ այն անձինք, վորոնց հետ նրանք առավելապես շփում ունեն։

Մայրենի լեզուն կարող է չզուգադիպել ազգությանը։

ԻՆՆԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ամուսնացա՞ծ է թե վոչ։

Ամուսնացածների նկատմամբ, անկախ ամուսնությունը գրանցված լինելուց, կամ չլինելուց, նշվում է «այո»։

Զամուսնացածների, այրիների և ապահարզանվածների նկատմամբ գրվում է «վոչ»։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Վո՞ր պետության քաղաքացի յե։

Խորհրդային քաղաքացիների նկատմամբ գրանցվում է «խորհրդ.», իսկ ոտարերկրացիների նկատմամբ՝ այն պետության անունը, վորի քաղաքացին է հարցման յենթարկվողը։

ՏԱՍՆՅԵՎՄԵԿԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Գրագիտությունը՝
ա) Վորեվե լեզվով կարդում յեվ գրում է, թե՞ միայն կարդում
բ) Թե՞ բոլորովին անգրագետ է։

Այն անձանց նկատմամբ, վորոնք միայն կարդալ են կարողանում վորևե լեզվով, թեկուզ վոչ վարժ, գրանցվում է «կարդում է», այն անձանց նկատմամբ, վորոնք կարողանում են կարդալ և գրել, գրանցվում է «կարդում և գրում է»։

«Անգրագետ» գրվում է միայն այն անձանց նկատմամբ, վորոնք չեն կարողանում վոչ կարդալ, վոչ եվ գրել։

ՏԱՍՆՅԵՎՅԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Սովորողի նկատմամբ ցույց տալ՝
ա) Ուսումնական հաստատության, դպրոցի կամ դասընթացների լրիվ անունը
բ) Վո՞ր դասարանում կամ վոր կուրսումն է սովորում (մեկ տարուց պակաս ուսման տեվողություն ունեցող դասընթացների նկատմամբ նշել—«կարճատեվ»)։

Այս հարցին պատասխանում են ցերեկային, յերեկոյան ու հեռակա բոլոր ուսումնական հաստատությունների և դասընթացների սովորողներն, անկախ այն բանից թե նրանք արտադրությունից կտրված կամ չկտրված են սովորում

12-ա հարցում ցույց է տրվում ուսումնական հաստատության, կամ դասընթացների լրիվ անունը որինակ «տարրական դպրոց № 23», «վոչ լրիվ միջնակարգ դպրոց № 3», «ժեծահասակների դպրոց անգրագետների համար», «ին-

դուստրիալ տեխնիկում», «պլանային հեռակա ինստիտուտ», «մեքենաշինության սատխանովականների դասընթացներ», «կոմբայնավարների դպրոց», «Պլանային Ակադեմիայի հատուկ նշանակման ֆակուլտետ» և այլն։

Միաժամանակ յերկու ուսումնական հիմնարկություններում սովորողների նկատմամբ պետք է գրանցել այն հիմնարկությունը, որն իր տիպով բարձր է մյուսից։

Վոչ մի տեղ չսովորող անձանց նկատմամբ 12-ա հարցում գրվում է «վոչ»։ 12-ը հարցում անհրաժեշտ է ցույց տալ այն դասարանը կամ կուրսը, որում սովորում է հարցման յենթարկվողը։ Որինակ՝ «6-րդ դասարանում», կամ «1-ին կուրսում»։

Այն անձանց նկատմամբ, որոնք սովորում են մեկ տարուց ավելի ուսման տևողություն ունեցող այնպիսի դասընթացներում, որոնք կուրսերի սատրաբաժանում չունեն, ցույց է տրվում ուսման տարին (1-ին, 2-րդ)։

Վոչ մի տեղ չսովորողների նկատմամբ 12-ը հարցի պատասխանի փոխարեն գիծ է քաշվում։

Մեկ ամսից պակաս տևողություն ունեցող դասընթացներում և խմբակներում սովորելը չի նշվում 12-րդ հարցում։

ՏԱՍՆՅԵՐԵՔԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ավարտել է արդյոք միջնակարգ կամ բարձրագույն դպրոց (ճշտել «միջն.», «բարձրագ.»)։

Միջնակարգ ուսումնական հաստատություն ավարտածների նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորած, բայց դրանք չավարտածների նկատմամբ գրանցվում է «միջն.»։ Բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած անձանց նկատմամբ գրանցվում է «բարձրագ.»։

Միջնակարգ կամ բարձրագույն կրթություն չունեցող անձանց նկատմամբ 13-րդ հարցում նշվում է «վոչ»։

Վոչ լրիվ միջնակարգ դպրոց, յոթնամյա, կամ միջնակարգ դպրոցի յոթը և ավելի դասարան ավարտածները գրանցվում են որպես միջնակարգ դպրոց ավարտածներ։

Հեռակա և յերեկոյան ուսումնական հաստատություններ ավարտելը, այլև եռամյա, հավասարվում է համապատասխան ուսումնական հաստատությունների ավարտման։

ՏԱՍՆՅԵՎԶՈՐՍԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Զբաղմունքի (ծառայության) տեսակը կամ ապրուստի միջոցների այլ աղբյուր նիրկայումս։

14-րդ հարցը պետք է լրացվի մարդահամարի թերթի մեջ գրանցված յուրաքանչյուր անձի նկատմամբ, անկախ նրա զբաղմունքի տեսակից և ապրուստի միջոցների աղբյուրից։

Այն անձանց նկատմամբ, որոնք որևէ զբաղմունք կամ ծառայություն ունեն, որը վաստակ կամ յեկամուտ է բերում, գրանցվում է այս զբաղմունքի կամ ծառայության մանրամասն անունը։

Զբաղմունք չունեցող, բայց ապրուստի միջոցների ինքնուրույն աղբյուր (կենսաթոշակ, թոշակ, սենյակները վարձով տալուց ստացված յեկամուտը և այլն) ունեցող անձանց նկատմամբ նշվում է ապրուստի միջոցների այդ աղբյուրը։

Զբաղմունք չունեցողների և այլ անձանց միջոցներով ապրողների, այլ և տնային տնտեսուհիների նկատմամբ նշվում է «խնամքի տակ» և ցույց է տրվում այն համարն ըստ կարգի, որով մտցված է մարդահամարի թերթի մեջ այն անձը, որի խնամքի տակ են նրանք գտնվում (որինակ՝ № 1-ի խնամքի տակ)։

Յեթե այն անձը, որի խնամքի տակ են գտնվում մարդահամարի թերթի մեջ գրանցված խնամատուները, ապրում է մեկ այլ վայրում, ապա անհրաժեշտ է ճիշտ նշել խնամա-

կալի զբաղմունքը և ցույց տալ նրա աշխատանքի վայրը որինակ «ՄՏԿ տրակտորիստի խնամքի տակ», «տրակտորային գործարանի ինժեների խնամքի տակ» և այլն)։

Զբաղմունքի մասին պատասխանները գրանցելիս անհրաժեշտ է ցույց տալ, թե հարցման յենթարկվողը ներկայումս ինչ աշխատանք է կատարում, կամ ինչ պաշտոն ունի։

Յեթե հարցման յենթարկվողը ներկայումս մի քանի աշխատանք է կատարում, ապա պիտի ցույց տալ այն աշխատանքը, վորը նա հիմնական է համարում։

Սեզոնային աշխատանքներում (որինակ՝ տորֆահանության, ջրային տրանսպորտի, ձկնորսության մեջ) զբաղված անձանց նկատմամբ ցույց է տրվում վերջին սեզոնի նրանց աշխատանքը, յեթե նրանք ներկայումս այլ զբաղմունք չունեն, կամ զբաղված են վորևե պատահական աշխատանք կատարելով։

Զբաղմունքը պետք է մանրամասն գրանցել։ Չի կարելի գրել «վարիչ», «վարպետ», այլ պիտի մատնանշել. որինակ՝ «զարգի վարիչ», «հորատիչ վարպետ», «կրկնակոշիկ պատրաստող վարպետուհի»։ Չի կարելի կրճատ գրանցումներ կատարել որինակ՝ «աշխղեկ», «ուսմասվար», այլ պարտադիր կերպով պիտի գրել լրիվ անունը «աշխատանքների ղեկավար», «ուսումնական մասի վարիչ»։

Բանվորների նկատմամբ պետք է ճշտորոշ գրանցել կոնկրետ զբաղմունքը, որինակ՝ «փականագործ-գործիք շինող», «հորատող հորատման մուրճով», «բրիչով հորատող»։ Չի կարելի գրել «պատրաստող», այլ պիտի ճշտորոշ գրել «գործիքներ պատրաստող», կամ «մետաղի խառնուրդ պատրաստող»։

Յեթե հարցման յենթարկվողն իրեն «սեպագործ» կամ «զանազան աշխատանքներ կատարող» է անվանում, ապա պիտի ավելի ճշգրիտ պարզել նրա աշխատանքի բնույթը և գրանցել որինակ՝ «բեռնող», «ման լվացող» և վոչ թե «սեպագործ»։

Սեպագործ կամ զանազան աշխատանքներ կատարող է գրանցվում հարցման յենթարկվողը միայն այն դեպքում, յերբ նա զբաղված է զանազան վոչ-վորակյալ աշխատանքներ կատարելով։

Յեթե հարցման յենթարկվողը զբաղմունքի հարցին պատասխանում է «որավարձ աշխատանք», ապա պիտի մատնանշել այն աշխատանքը, վորով հարցման յենթարկվողն ավելի հաճախ է զբաղված լինում։

Ծառայողների համար անհրաժեշտ է մատնանշել պաշտոնը կամ կոնկրետ կատարած գործը, որինակ՝ «տնտեսագետ-պլանավիկ», «ավագ ինժեներ», «վիճակագիր-հրահանգիչ», «հաշվապահ», «գանձապահ»։

Խորհրդատեսությունների, ՄՏ Կայանների բանվորների և կոլտնտեսականների նկատմամբ պետք է ճշգրիտ մատնանշվի խորհրդատեսության, ՄՏ Կայանի, կամ կոլտնտեսության մեջ նրանց կատարած վորոշ հատուկ աշխատանքը. որինակ՝ «կոլտնտեսության նախագահ», «կթող», «ձիապահ», «պահակ», «հովիվ», «տրակտորիստ», «խոզաբուծական ֆերմայի վարիչ», «լաբորատորիայի վարիչ», «զոոտեխնիկ»։

Յեթե հարցման յենթարկվողը բրիգադիր է, գրանցել՝ «տրակտորային բրիգադի բրիգադիր», «ձիերի գոմի բրիգադիր», «դաշտագործական բրիգադի բրիգադիր»։

Միայն այն դեպքերում, յերբ հարցման յենթարկվողը գյուղատնտեսական զանազան աշխատանքներ է կատարում և չունի վորոշ հատուկ զբաղմունք, պետք է նշել «գյուղատնտեսություն»։

Մենատնտեսների նկատմամբ անհրաժեշտ է ճշգրիտ նշել նրանց զբաղմունքները. որինակ՝ «բանջարաբույծ», «մեղվաբույծ» և այլն։ Զբաղմունքը «գյուղատնտեսություն» կարելի յե գրել միայն այն դեպքերում, յերբ մենատնտեսը զբաղված է գյուղատնտեսական տարբեր աշխատանքներով իր անտեսության մեջ և յերբ նրա անտեսությունը վորոշ ուղղություն չունի։

1-36083

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մենատնտեսների ընտանիքների այն անդամների նկատմամբ, վորոնք զբաղված են իրենց տնտեսության մեջ և հատուկ զբաղմունք չունեն, պետք է գրանցել «գյուղատնտեսություն»։

Այն կոլտնտեսականների և մենատնտեսների նկատմամբ, վորոնք մարդահամարի պահին աշխատում են արդյունաբերական ձեռնարկություններում, կառուցումներում, փայտամթերումներում, այլև այն անձանց նկատմամբ, վորոնք զբաղված են տնայնագործական արհեստներով, ժամանակավորապես նրանց ունեցած զբաղմունքը մարդահամարի պահին։

Այն տնայնագործների նկատմամբ, վորոնք աշխատում են արհեստագործական արտելի, արհեստագործական կոլտնտեսության արհեստանոցներում, պետք է մատնանշել նրանց կատարած աշխատանքը. որինակ՝ «ձիկելող», «մետաղի ճախարակագործ», «կոշկեղենի յերեսագործ»։

Տանն աշխատող տնայնագործների նկատմամբ անհրաժեշտ է նշել արհեստի տեսակը. որինակ՝ «ժանեկագործ», «ցանցագործ», «կոշկակար»։

Կոլտնտեսականների ընտանիքների կոլտնտեսության մեջ չաշխատող անդամների, բանվորների, ծառայողների և տնայնագործների ընտանիքի անդամների նկատմամբ, յեթե այդ անդամները զբաղված են իրենց տնամերձ ժամանակավոր տնտեսությունների մեջ միայն անասունի խնամքով և գյուղատնտեսական աշխատանքներով, նշվում է «ժամանակավոր գյուղատնտեսություն»։

Աղատ պրոֆեսիայի անձանց նկատմամբ նշել «գրող», «յերաժիշտ», «դերասան», «նկարիչ», «քանդակագործ» և այլն։

Այն անձանց նկատմամբ, վորոնք փոխել են աշխատանքը բայց դեռ չեն մտել նոր աշխատանքի, նշվում է վերջին աշխատանքը։

Ուսումնական հաստատություններում սովորելը, վորպես զբաղմունք չի նշվում։

Այն անձանց նկատմամբ, վորոնք սովորում են վերապատրաստման և վորակի բարձրացման դասընթացներում, նշվում է զբաղմունքն ըստ աշխատանքի կամ ծառայության վայրի։

Յեթե սովորողը միաժամանակ աշխատանք կամ զբաղմունք ունի, վորը նրան վաստակ է տալիս, նշվում է այդ զբաղմունքը կամ աշխատանքը։

Այն սովորողների նկատմամբ, վորոնք զբաղմունք կամ աշխատանք չունեն, այլ թոշակ են ստանում, նշվում է «թոշակառու»։

Ֆաբգործուսի դպրոցներում սովորողների նկատմամբ գրանցվում է մասնագիտությունը. որինակ՝ «աշակերտ-ֆրեզորդ»։

Այն սովորողների նկատմամբ, վորոնք զբաղմունք չունեն և թոշակ չեն ստանում, նշվում է «խնամքի տակ»։

Այն անձանց նկատմամբ, վորոնք կենսաթոշակ են ստանում և զբաղմունք չունեն, նշվում է «կենսաթոշակավոր»։

Այն անձանց նկատմամբ, վորոնք թոշակ կամ կենսաթոշակ են ստանում և միաժամանակ ունեն վորևե աշխատանք, նշվում է միայն աշխատանքը, իսկ թոշակն ու կենսաթոշակը բոլորովին չի նշվում։

Կոլտնտեսության այն անաշխատունակ անդամները, վորոնք գյուղատնտեսական մթերքներ են ստանում կոլտնտեսության ֆոնդից, գրանցվում են վորպես կոլտնտեսության խնամատուներ։

Մանկատների, կոլտնտեսական պատրոնատների սանների նկատմամբ գրանցվում է «մանկատուն», «կոլտնտեսական պատրոնատ»։

Զափահաս դարձածների նկատմամբ, վորոնք աշխատանքի յեն մտել, բայց դեռ շարունակում են ապրել մանկատներում, նշվում է զբաղմունքը կամ աշխատանքը։

Մանկատներին կից ուսուցման արհեստանոցներում կատարվող աշխատանքը չի նշվում։

Հաշմանդամների տանն ապրող անձանց նկատմամբ գրանցվում է «հաշմանդամների տուն»։

Այն անձանց նկատմամբ, վորոնք բուժվում են հիվանդանոցներում, սանատորիաներում, նշվում է զբաղմունքը ըստ աշխատանքի կամ ծառայության վայրի մինչև հիվանդանալը։

Այն անձանց նկատմամբ, վորոնք բուժվում են հոգեբուժական հիվանդանոցներում և քրոնիկական հիվանդների բուժական հաստատություններում, գրվում է «հիվանդանոցում», «հոգեբուժական հիվանդանոցում»։

ՏԱՍՆՅԵՎՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Աշխատանքի վայրը (ձեռնարկության, կոլտնտեսության, հիմնարկության անունը)։

Այստեղ անհրաժեշտ է լրիվ կերպով ցույց տալ այն հիմնարկության, կազմակերպության, ձեռնարկության, կոլտնտեսության անունը, վորտեղ աշխատում է հարցման յենթարկվողը, ըստ վորում ձեռնարկության նկատմամբ պետք է ժամանակել, թե դա ինչ ձեռնարկություն է (արտադրության տեսակը)։ Պետք է գրանցել որինակ՝ «Պրոլետարիյ Զուգունաձուլական գործարան» և վոչ թե ուղղակի «Պրոլետարիյ գործարան», «Ոկտյաբր Մանածագործական ֆաբրիկա», և վոչ թե ուղղակի «Ոկտյաբր Ֆաբրիկա»։

Յեթե ձեռնարկությունը պատկանում է խորհտնտեսության, կամ կոլտնտեսության, ժամանակել ձեռնարկության տեսակը և խորհտնտեսության ու կոլտնտեսության անունը. որինակ՝ «Գիգանտ խորհտնտեսության Ելեկտրոկայան», «Սվոբոդնի պուտ կոլտնտեսության կարի արհեստանոց»։ «Կրասնայա Նեվա կոլտնտեսության վարսավիրանոց», «Կրասնի կուստար արհեստագործական կոլտնտեսության կահույքի արհեստանոց»։

Յեթե հարցման յենթարկվողն աշխատում է «Սայուզժուկայի» № 42 ալրաղացում, ապա պիտի գրել «Սայուզժուկայի № 42 ալրաղաց», չի կարելի ուղղակի գրել «Սայուզժուկա»։

Յեթե հարցման յենթարկվողն աշխատում է հիմնարկության մեջ, ապա անհրաժեշտ է աշխատանքի վայրը գրել այնպես, վոր յերևա, թե դա ինչ հիմնարկություն է՝ համամիութենական, հանրապետական, մարզային, թե շրջանային, որինակ՝ «ՈՒԽՍՀ Տեղական արդյունաբերության ժողկոմատ», կամ «ԽՍՀՄ Առժողկոմատ», կամ «Մարզային հողային բաժին», «Ժողկրթության շրջանային բաժին», կամ «Սևերոլես տրեստի Վարչություն»։

Յեթե ձեռնարկությունը պատկանում է կոոպերատիվ արտելին, ժամանակվում է ձեռնարկության անունը և արտելի անունը, որինակ՝ «Տրուդովայա իգլա արտելի կարի արհեստանոց»։

Արհեստագործական կոոպերացիայի մեջ աշխատող բանվորների և ծառայողների նկատմամբ նշվում է, թե նրանք ձեռնարկության մեջ, թե՞ արտելի վարչության մեջ են աշխատում, որինակ՝ «Կոոպդրեվպրոմ արտելի կահույքի ֆաբրիկա» կամ «Կոոպդրեվպրոմ արտելի վարչություն»։

Այն կառուցողների նկատմամբ, վորոնք ձեռնարկություններում են աշխատում, անհրաժեշտ է գրանցել «Կոմինտերն սոցգյաբանի շինարարության մեջ», Բոլշևիկ հրուշակի ֆաբրիկայի նորոգման վրա», «յերկաթուղային կամուրջի նորոգման վրա», և այլն։

Ֆաբրիկաներում սովորողների նկատմամբ նշվում է այն ձեռնարկության անունը, վորին կից է գտնվում ֆաբրիկայի դպրոցը։

Աշխատանքի վայրը գրանցելիս ձեռնարկության կամ հիմնարկության անունը չի կարելի կրճատ գրել։

Որինակ չի կարելի գրել «ԺՏՀՇՏ», այլ պարտադիր կերպով պիտի գրել «Ժողովրդական տնտեսության հաշվառման շրջանային տեսչություն», չի կարելի գրել «ՄՏԱԲ», այլ պետք է գրել «Մարզգործկոմի տեղական արդյունա-

բերության բաժին»,

Մենատնտեսների և չկոոպերացված տնայնագործների նկատմամբ գրանցվում է «իր տնտեսության մեջ»։

Կոլտնտեսականների ընտանիքների այն անդամների նկատմամբ, որոնք զբաղված են իրենց ոժանդակ տնտեսության մեջ, նշվում է կոլտնտեսության անունը։

Բանվորների և ծառայողների ընտանիքի այն անդամների նկատմամբ, որոնք զբաղված են ոժանդակ գյուղատնտեսությամբ, գրանցվում է «ոժանդակ տնտեսության մեջ»։

Տնային աշխատավորուհիների նկատմամբ նշվում է վարձողի ազգանունը։

Ազատ պրոֆեսիայի անձանց, կենսաթոշակավորների և թոշակառուների, ժանկատների, կոլտնտեսական պատրոնատների սանների և հաշմանդամների տներում ապրողների, այլ և խնամքի տակ գտնվողների նկատմամբ աշխատանքի վայրի մասին հարցի պատասխանի փոխարեն գիծ է քաշում։

ՏԱՍՆՅԵՎՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հասարակական ո՞ր խմբին է պատկանում՝ բանվորների, ծառայողների, կոլտնտեսականների, կոոպերացված տնայնագործների, մենատնտես-գյուղացիների, չկոոպերացված տնայնագործների, ազատ պրոֆեսիայի տեր մարդկանց, թե կրոնական պաշտամունքի սպասավորների յեվ ոչ աշխատավորական տարրերի խմբին։

Պետք է նկատի ունենալ, որ 14-րդ հարցի (զբաղմունքի տեսակը) և 15-րդ հարցի (աշխատանքի վայրը) պատասխաններն ամբողջովին չեն կարող հիմք ծառայել հարցման յենթարկվողին հասարակական այս կամ այն խմբի շարքը դասելու համար։

Կոլտնտեսության այն անդամները, որոնք մարդահամարի պահին զբաղված են արդյունաբերության, շինարարության, փայատամբերումների մեջ և այլն ժամանակավոր աշխատանք կատարելով, բայց որոնք մշտապես աշխատում են կոլտնտեսության մեջ, գրանցվում են որպես կոլտնտեսականներ։

Կոլտնտեսության այն անդամները, որոնք մշտապես զբաղված են արդյունաբերության, շինարարության, հիմնարկությունների և այլնի մեջ ու չեն աշխատում կոլտնտեսության մեջ, կամ եվ մասամբ միայն մասնակցում են կոլտնտեսության աշխատանքներին, արձակուրդի ժամանակ և հանգստի որերին, գրանցվում են «բանվոր (կոլտնտեսության անդամ)», կամ «ծառայող (կոլտնտեսության անդամ)»։

Կոլտնտեսականների ընտանիքների այն անդամները, որոնք կոլտնտեսության մեջ աշխորեր չունեն և իրենց ոժանդակ տնտեսության մեջ զբաղված են անասուն խնամելով և գյուղատնտեսական աշխատանքներով, դասվում են կոլտնտեսականների շարքը։

Այն անձինք, որոնք ամեն տեսակի արհեստագործական և ձկնորսական կոոպերացիայի, հաշմանդամների կոոպերացիայի արտելների անդամ են, դասվում են կոոպերացված տնայնագործների և ոչ թե բանվորների և ծառայողների խումբը։

Այն անձինք, որոնք վարձով աշխատում են արհեստագործական, ձկնորսական կոոպերացիայի և հաշմանդամների կոոպերացիայի հիմնարկություններում և ձեռնարկություններում ու արտելների փայատեր-անդամներ չեն, դասվում են ոչ թե կոոպերացված տնայնագործների, այլ համապատասխան կերպով բանվորների և ծառայողների խումբը։

Մենատնտեսների հասարակական խումբն են դասվում այն անձինք, որոնք կոլտնտեսությունների, արհեստագործական կոոպերացիայի կամ հաշմանդամների կոոպերացիա-

յի անդամներ չեն, անհատական գյուղատնտեսություն են վարում, պայմանով, որ գյուղատնտեսությունը նրանց գլխավոր զբաղմունքն է։ Մենատնտեսների հասարակական խումբն են դասվում նաև այդ անձանց բոլոր խնամառուները։

Մենատնտեսների ընտանիքների այն անդամները, որոնք ապրուստի միջոցների ինքնուրույն աղբյուր ունեն մենատնտեսային գյուղատնտեսությունից դուրս, դասվում են ոչ թե մենատնտեսների խմբի մեջ, այլ հասարակական ուրիշ խմբերում, նայած նրանց զբաղմունքին։

Այն բանվորներն ու ծառայողները, որոնք ժամանակ գյուղատնտեսություն ունեն (անկախ դրա չափերից, յեկամտաբերությունից և գյուղատնտեսական հարկման յենթարկվելուց կամ չենթարկվելուց) մենատնտեսների խումբը չեն դասվում։ Մենատնտեսների խումբը չեն դասվում նաև այս անձանց բոլոր խնամառուները, թեկուզ և նրանք զբաղված լինեն միայն ժամանակ գյուղատնտեսությամբ։

Ազատ պրոֆեսիայի տեր՝ մարդկանց խումբն են դասվում այն անձինք, որոնց աշխատանքն իր բնույթով կապված չէ մշտական աշխատանքի հետ որոշ հիմնարկության կամ ձեռնարկության մեջ (գրողներ, կոմպոզիտորներ, նկարիչներ, փաստաբաններ, և այլն)։

Ոչ աշխատավորական տարրերի շարքն են դասվում վերավաճառողները, որևէ այլ ոչ աշխատավորական յեկամուտների հաշվին ապրողները, այլ և հարցման յենթարկվողներից նրանք, որոնք չեն կարողանում մատնանշել իրենց ապրուստի միջոցների աղբյուրը։ Ոչ մի դեպքում չպիտի դասել ոչ աշխատավորական տարրերի խմբին այն աշխատավորներին, որոնք կորցրել են իրենց՝ աշխատունակությունը, այլ և այն անձանց, որոնք գտնվում են աշխատավորների խնամքի տակ։

Խնամառուները դասվում են հասարակական այն խմբի մեջ, որի մեջ դասվում են այն անձինք, որոնց խնամքի տակ են գտնվում նրանք։

Կենսաթոշակավորները ու թոշակառուները դասվում են այն հասարակական խմբին, որին նրանք պատկանում էին կենսաթոշակ կամ թոշակ ստանալուց առաջ։ Այն թոշակառուները, որոնք մինչև թոշակի անցնելը ոչ մի տեղ չեն աշխատել, դրանցվում են որպես այն անձանց հասարակական խմբին պատկանողները, որոնց խնամքի տակ են նրանք գտնվել։

ԽՍՀՄ Պետպլանին կից ժողտնտուսվարման
կենտրոնական վարչության պետ՝ Ի. ՍԱՖՈՒՏԻՆ

Պատ. խմբագիր՝ Գ. Աբելյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան

Պետհամալսարանի հրատարակչության տպարան, Յերևան
Գլավլիտի լիազոր գ. 3775, պատվեր № 668, Տիրաժ 3000

20

ՀՀ Ազգային գրադարան
NL0946943

8 ЯНВ 1939

6

I

360891